ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ Հ.1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

18.09.2023թ.

«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան Հ.1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի միջև 15 օգոստոսի 2023թ. կնքված N ԱՄՎՀԴ1-ԳՀԱՊՁԲ-2023/03-03 պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. սեպտեմբերի 14-ը:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել ձեր կազմակերպության կողմից, մասնավորապես 7-րդ չափաբաժնով նախատեսված «էլեկտրոնային գրատախտակները» չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան Հ.1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը մասնակի միակողմանի լուծում է Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան Հ.1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի միջև 15 օգոստոսի 2023թ. կնքված N ԱՄՎՀԴ1-ԳՀԱՊՁԲ-2023/03-03 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու

օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Այսպիսով, «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ին տրվում է 10 /տասը/ օրացուցային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 420000 /չորս հարյուր քսան հազար/ դրամ և պայմանագրի 280000 /երկու հարյուր ութսուն հազար/ դրամ ապահովումների գումարները Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան Հ.1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ 900328000568 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ին կազմակերպությանն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կատարողի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կատարողի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ